



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

№ ԱԽ-16-Ե-11  
2017թ.

**Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՍԱՐՁԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ  
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝**

*նախագահությամբ՝*

*Ա. Սկրտումյանի*

*մասնակցությամբ ԱԽ անդամներ՝*

*Ա. Բարայանի, Գ. Բաղիրյանի,  
Ա. Դարբինյանի, Գ. Խանդանյանի,  
Ա. Խաչատրյանի, Մ. Հարթենյանի,  
Գ. Ղազինյանի, Ս. Չիչոյանի,  
Ե. Սողոմոնյանի, Վ. Ստեփանյանի,  
Հ. Փանոսյանի*

*քարտուղարությամբ՝*

*Շ. Վարդանյանի*

2017 թվականի նոյեմբերի 17-ին քաղաք Երևանում՝ դռնփակ նիստում, քննարկելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի թափուր պաշտոնում նշանակելու համար Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահի ներկայացրած թեկնածությունը և ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 122-րդ, 123-րդ հոդվածներով և 111-րդ հոդվածի 1-ին մասով,

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի թափուր պաշտոնում նշանակելու համար Ալֆրեդ Մաքսիմի Վարդանյանի թեկնածությանը:

2. Ալֆրեդ Մաքսիմի Վարդանյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի թափուր պաշտոնում նշանակելու համար:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**